04 AUG 2010

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

# ՊԱՏՐԱՍՏԵԼ

## ԴԻՊՈՒԿ ԿՐԱԿԻ ՎԱՐՊԵՏՆԵՐ

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ԵՎ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

623
Պ-31

ՀԽՍՀ ՊԱՇՏԱՎԻԱՔԻՄԻ ԿԵՆՏԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆ 1936

17 JUL 2013

Թարգմ. Գ. Արայան
Պատ. խմբ. Յ. Լիլոյան
Տեխ. ձևավ. յեվ սրբագրություն
Ա. Հախվերդյանի

2912-38

Փաղփրաթի տպարան Ռեկլամ. Հրատ. Բյուրո

Գլավլիտի լիազոր № 1111 Պատվեր № 607. Տիրաժ 3000

6923
Դ-31 ԿՏ.

# ԴԵԳԻ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍԸ

Այստեղ հրապարակում ենք՝ հրացանով և ատրճանակով հրաձգության նոր, ժամանակավոր կլասիֆիկացիոն նորմաները, վորոնք հաստատված են ՑՆԳԽ (այժմ ԽՍՀՄ Ժողկոմխորհրդին կից ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի Համամիութենական կոմիտեյի) կողմից։

Այդ նորմաների նշանակությունը՝ հսկայական է։ Դրանց գործածության մեջ մտցնելը վերացնում է հրաձգային պատրաստությունն անցկացնող զանազան կազմակերպությունների հրաձգային դասակարգման կլասիֆիկացիայի մեջ մինչև հիմա գոյություն ունեցող աններդաշնակությունը. Նորմաները միասնական ու պարտադիր են ԲԳԿԲ, «Դինամո» ընկերության, Օսոավիաքիմի և այլ պաշտպանական ու սպորտական կազմակերպությունների համար։ Այդ հնարավորություն է տալիս բարձրացնելու նոր, ավելի բարձր աստիճանի հասցնելու սպորտ-հրաձգային աշխատանքների վորակը։

Նոր կլասիֆիկացիոն նորմաների համար վորպես հիմք են ծառայել այն լավագույն հրաձիգների

արդյունքներն ու փորձը, վորոնց համար հին նորմաներն արդեն անցած էտապ են հանդիսանում։ Հրաձիգներն իրենքերն են մամուլում բարձրացրել նորմատիվների ու ցուցանիշների վերանայման անհրաժեշտության հարցը։

Նոր նորմաներն ավելի բարձր պահանջներ են առաջադրում զանազան դասակարգման հրաձիգների և խոշոր չափով լայնացնում են հրաձգային սպորտի հնարավորությունները։ 2-րդ աստիճանի հրաձգի համար խնդիրների քանակի և հրաձգության պայմանների փոփոխումը նրան հնարավորություն է տալիս տիրապետելու մեծ հեռավորությունների վրա տեղի ունեցող արագ և դիպուկ հրաձգության տեխնիկային, վորը հատկապես կարևոր է ժամանակակից մարտի պայմաններում, յերբ ժամանակը պիտի հաշվեն վայրկյաններով։ Առաջին անգամն է, վոր մտցված է փոքրտրամաչափ հրացանի դաշտային հրաձգի դասակարգումը, 2-րդ և 1-ին կարգերի սնայպերի դասակարգումը։

Պետք է այդ նորմաներն անհապաղ հասցնել հրաձգային լայն ակտիվին և գործնականորեն կիրառել այդ նորմաները, առանց վերևից հատուկ ցուցումների և կարգադրությունների սպասելու։ Սնայպինգի բոլոր հրահանգիչները պարտավոր են 1937 թվի մայիսի 1-ից վոչ ուշ տալ յերկրորդ դասի սնայպերի քննությունները, իսկ առաջին կարգի հրահանգիչները հանձնեն յերկրորդ աստիճանի Վորոշիլովյան հրաձգի նոր նորմաները։

Հրաձգային սպորտը կազմակերպչորեն ամրապնդելու, հրաձգային կադրերի և նրանց վարպետության



մշտական և ընդհանուր աճն ապահովելու համար, ՍՍՀՄ Պաշավիաքիմի Կենտխորհրդի Նախագահությունը դեռ 1934 թ. նոյեմբեր ամսին պահանջել է ավտոմատիկորեն անցկացնել Վորոշիլովյան հրաձիգների կոնտրոլ հրաձգությունները և համախմբել դրանց մշտական խմբերի մեջ։ Նախագահության այդ ցուցումները չեն կատարվել։ Հրաձգային խմբեր շատ քիչ են ստեղծված, վատ է ընթանում նաև կոնտրոլ հրաձգությունների գործը։

1936 թվի փետրվարին խորհրդային հրաձգի ռեյդի ընթացքում 14 կազմակերպությունների (Մոսկվայի, Լենինգրադի, Հյուսիսային յերկրի, Գորկու, Ղրիմի, Իվանովոյի և այլն) 238,000 առաջին աստիճանի Վորոշիլովյան հրաձիգներից կոնտրոլ հրաձգություններն անցել են ընդամենը մոտ 13 տոկոսը։ Այդ կազմակերպություններում մշտական խմբեր ստեղծված են միայն 1,145-ը, վորոնք ընդգրկում են 17,175 հրաձիգ։ Հրաձիգների հիմնական մասսան խմբերում չի համախմբված։ Հատկապես անբավարար է խմբերի կազմակերպումը Հեռավոր-արևելյան, արևելյան Սիբիրի, Հյուսիսային Ղրիմի և Սարատովի կազմակերպություններում։

Նույնպես անբավարար, մեծ ուշացումով և առանց բավարար չափով հասարակությունը ներգրավելու անցնում է հրաձգային սպորտի հրահանգիչների ստուգումը։ Շատ կազմակերպություններ դեռ անհրաժեշտ միջոցներ ձեռք չեն առել հրահանգիչների վերապատրաստման և նրանց վորակավորումը բարձրացնելու համար։

Նախագահության ցուցումները չեն կատարվել այն պատճառով, վոր դրանց կատարման համար պա-

հանձնողական վերահսկողություն չի յեղել մարզային, յերկրային և հանրապետական խորհուրդների, նույնպես և Պաջավիաքիմի Կենտխորհրդի սպորտ հրաձգային կոմիտեյի և մարտական պատրաստության վարչության կողմից։

ԽՍՀՄ Պաջավիաքիմի Կենտխորհրդի Նախագահությունը սույն թվի հունիսի 29-ի իր վորոշումով պարտավորեցրել է բոլոր կազմակերպություններին 1936 թ. նոյեմբերի 1-ից վոչ ուշ, համախմբել առաջին և յերկրորդ աստիճանի բոլոր Վորոշիլովյան հրաձիգներին մշտական խմբերի մեջ սկզբնական կազմակերպություններին և հրաձգային ակումբներին կից։

Առաջին և յերկրորդ աստիճանի բոլոր Վորոշիլովյան հրաձիգների կոնտրոլ հրաձգությունները առաջարկված է վերջացնել առ 1-ն հունվարի 1937 թվի։

Առ 1-ն հոկտեմբերի 1936 թ. պետք է ավարտված լինի հրաձգային սպորտի բոլոր հրահանգիչների ստուգումն ու վերապատրաստումը։ Բոլոր շրջանային կազմակերպությունները պարտավոր են մինչև ձմեռային շրջանի վերջը անցկացնել ավելի ցածր կարգերը փոխադրած հրահանգիչների վերապատրաստումը։

Նախագահությունն առաջարկել է շրջխորհուրդներին կից կազմակերպել հրաձգային սպորտի հրահանգիչների առանձին հրամանատարական ուսուցում։ Այդ բոլոր միջոցառումներն անմիջորեն ապահովում են նոր նորմաներին անցնելը և յերկրորդ աստիճանի հրաձիգների ու սնայպերների մասսայական պատրաստությունը։



Նախագահության վորոշումը գործողությունների սպառիչ ծրագիր է, պարզ ծրագրած միջոցառումներով ու պարզորոշ ժամկետներով։ Այդ ծրագրի կատարման համար պատասխանատվությունը նախագահությունը դրել է մարզային և շրջանային խորհուրդների նախագահների վրա։

Նրանց ուղղակի պարտքն է՝ ամրապնդել ըսպորտ-հրաձգային սպորտի ճակատը, ոգնել դրա համար դաստիարակելու գերազանց կադրեր և ապահովել Պաջավիաքիմական հրաձիգների, սոցիալիստական հայրենիքի հավատարիմ զավակների և վստահելի պաշտպանների պատրաստության բարձր վորակը։

«Նա ստրաժե» թերթի հուլիսի 2-ի առաջնորդողը։

---

# ՊԱՏՐԱՍՏԵԼ ԴԻՊՈՒԿ ԿՐԱԿԻ ՎԱՐՊԵՏՆԵՐ

## ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ (ԿԼԱՍՍԻՖԻԿԱՑԻՈՆ) ՆՈՐՄԱՆԵՐԸ

Հրաձգությունների այս միասնական նորմաները գործածության մեջ են մտցվում բոլոր Պաշավիաքիմական կազմակերպություններում 1936 թվի օգոստոսի 1-ից։ Նկատի ունենալով, վոր 400 մետրի հրաձգարանները դեռ չեն պատրաստված, ապա 2-րդ աստիճանի Վորոշիլովյան հրաձգի նորմաների 2-րդ վարժության հրաձգության նոր պայմանները գործադրության մեջ մտցնելը հետաձգվում ե մինչև 1937 թվի նոյեմբերի 1-ը։ Մինչև այդ ժամանակը 2-րդ վարժությունը թույլատրվում ե կատարել 300 մետր հեռավորության վրա։



# ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆ

## 1

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ (ԿԼԱՍՍԻՖԻԿԱՑԻԱՆ) ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆԻՑ ԱՆՑ Ե ԿԱՑՎՈՒՄ ՏԻՐՈՒՄ

*ԶԵՆՔԸ—ՏՈԶ փոքրակալիբր հրացան, մոդել 8 կամ 9-ը, առանց կառուցողական փոփոխությունների։ Նշանացուցային հարմարանքը սահմանված տիպարի յե, նշանոցը բաց ե։*

### ՀՐԱԶԻԳ

(Սկզբնական դասակարգում)

*ՀԵՌԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ—15 կամ 25 մետր ե։*

*ԹԻՐԱԽԸ— Հեռավորությանը համապատասխան № 6/15 կամ № 6 (ՑՆԳԽ ցուցակի համաձայն)։*

*ԴՐՈՒԹՅՈՒՆԸ—Հրաձգության համար՝ պառկած ձեռքից, հրացանային փոկը կիրառելով։*

*ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 3 փորձնական և 5 քննական։*

*ԺԱՄԱՆԱԿԸ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ — համապատասխանորեն 3 և 5 րոպե։*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— 40 աչկ։*

## ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳ

Կատարումը թույլատրվում է սկզբնական դասակարգման նորմաները կատարածներին և 14 տարեկան հասակին հասած պիոներներին, վորոնք կատարել են Պատանի Վորոշիլովյան հրաձգի (ՊՎՀ) նորման։

ՁԵՆՔԸ—ՏՈԶ փոքրակալիբր հրացան մոդել 8 կամ 9-ը, առանց կառուցողական փոփոխությունների. Նշանոցային հարմարանքը—սահմանված տիպարի չի. Նշանոցը—բաց կամ օրթոպտիկական։

### 1-ին վարժություն

ՀԵՌԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ— 25 կամ 50 մետր։

ԹԻՐԱԽԸ—Հեռակայություններին համապատասխան № 6 կամ № 7 (ՑԿԳԽ ցուցակի համաձայն)։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ— հրաձգության համար— պառկած, ձեռքից, հրացանային փոկը կիրառելով։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ — 3 փորձնական և 5 քննական։

ԺԱՄԱՆԱԿԸ— հրաձգության համար—համապատասխանորեն 3 և 5 րոպե։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— բաց նշանոցով 25 մետրի վրա—43 աչկո, 50 մետրի վրա—40 աչկո, օրթոպտիկական նշանոցով 25 մետրի վրա—46 աչկո, 50 մետրի վրա—43 աչկո։



### 2-րդ վարժություն

ՀԵՌԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ—25 կամ 50 մետր։

ԹԻՐԱԽԸ— ԲԴԿԲ հրաձգությունների կուրսի № 9, հեռակայություններին համապատասխան փոքրացրած 12 կամ 6 անգամ։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ— Հրաձգության համար—պառկած, ձեռքից, հրացանային փոկը կիրառելով։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 5 (առանց փորձնական փամփուշտների)։

ԺԱՄԱՆԱԿԸ— հրաձգության համար— ՏՈԶ—8 հրացանով—55 վայրկյան, ՏՈԶ—7 հրացանով 50 վայրկյան, ՏՈԶ—9 հրացանով—45 վայրկյան։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ—Բաց նշանոցով 25 կամ 50 մետրի վրա 4— դիպում կերպարանին (ֆիգուրին). օրթոպտիկական նշանոցով 25 կամ 50 մետրի վրա—5 դիպում կերպարանին։

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ—հրաձիգը պատրաստվում է պառկած հրաձգության, զենքը լցրած չէ (ՏՈԶ—9 լցված ժամանակ պահեստատուփը լցրած է և դրված է հրացանի մեջի իր բնի մեջ). փականակը բաց է, հրացանի կոթը կոնատակին է։ «Կրակ» հրամանով (սուլիչով) 5 հաջորդական ձիգ է կատարվում. վերոհիշյալ ժամանակն անցնելուց հետո «Կաց» հրաման (սուլիչ) է տրվում, վորի համաձայն հրաձգությունը դադարեցվում է։

Նորման կատարելու համար 5 քննական ձիգը սահմանված ժամանակամիջոցում պարտադիր է դիպումների ցույց տված քանակից անկախ։

2

## ԴԱՇՏԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ (ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՆ) ՓՈՔՐԱՍԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆԻՑ ԱՆՑ Ե ԿԱՑՎՈՒՄ ԴԱՇՏՈՒՄ, ՄԻՆՍՏՑՈՒՐ ՊՈԼԻԳՈՆՈՒՄ

*(հրաձգարանում)*

*(Այն անձնավորությունների համար, վորոնք չեն անցնում սպորտ-հրաձգային պատրաստությունը—7,62 միլիմետր տրամաչափի մարտական հրացանով)։*

*ԶԵՆՔԸ—ՏՈԶ փոքրակալիբր հրացան, մոդել 8 և 9-ը, առանց կառուցողական փոփոխությունների. Նշանոցային հարմարանքը—սահմանված տիպարի յե-նշանոցը—բաց է։*

## ԴԱՇՏԱՅԻՆ ՀՐԱՁԻԳ ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆՈՎ.

*Կատարումը թույլատրվում է 1-ին աստիճանի Վորոշիլովյան հրաձգի նորման կատարածներին 2-րդ դասի սնայպերի կոմպլեքսային ծրագրով, հետևյալ փոփոխություններով.*

*1) Հեռավորությունները ու թիրախները համապատասխանորեն փոքրացված են 5 անգամ։*

*2) Հրաձգի քողարկման ստուգումը 2 վարժություններում էլ կատարվում է միմիայն հրաձգությունն սկսելուց առաջ, ինչպես նախանշվում է 2-րդ դասի սնայպերի 1-ին վարժության ժամանակ։*

*3) Կատարման նորմաները նույնն են, ինչպես վոր 2-րդ դասի սնայպերի համար։*



3

## ԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԿԱՄԱՅԱԿԱՆ ՏԻՊԱՐԻ ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆԻՑ ԱՆՑ Ե ԿԱՑՎՈՒՄ ԴԱՇՏՈՒՄ ՀՐԱՁԳԱՐԱՆՈՒՄ.

*(Այն անձնավորությունների համար, վորոնք չեն անցնում մարտական հրացանի վարպետի համար սահմանված ստուգումները)։*

*ԶԵՆՔԸ—ՏՈԶ փոքրակալիբր հրացան, մոդել 8 և 9-ը կամ խորհրդային արտադրության կամայական տիպարի։ Զլցրած հրացանի քաշը, նշանոցային և այլ հարմարանքները (շամպինյոն, խցատակ իր կեռով, թուշ և այլն) ներառյալ—9 կիլոգրամից վոչ ավելի։*

*ՆՇԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԸ— ամեն մի ցանկացած տեսակի։*

*Օպտիկական (տեսարանական) ապակիներ, վորոնք սարքված են զենքի վրա կամ նշանոցային հարմարանքներում, չեն թույլատրվում։*

*ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ— Լոնգ-Ռայֆլ ամեն մի մարկայի։*

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՀՐԱՁԻԳ ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆՈՎ, ԿԱՆԳՆԱԾ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Կատարումը թույլատրվում է 2-րդ աստիճանի Վորոշիլովյան հրաձգի նորման կատարածներին։*

*ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ— 50 մետր։*

*ԹԻՐԱԽԸ—№ 7 (ՑԿԳԽ ցուցակի համաձայն)։*

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար—կանգնած.

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ—5 փորձնական և 20 քննական՝ 10 սերիաներով (յերկուական ձիգ յուրաքանչյուր թիրախին)։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար—փորձնական ձիգերի համար—5 րոպե և 10 ձիգից բաղկացած սերիայի համար—20 րոպե։ 10 ձիգից բաղկացած յուրաքանչյուր սերիան արձակվում է առանց ընդհատման, այսինքն, առանց տեղից շարժվելու։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— 170 աչկ։

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՀՐԱՁԻԳ ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆՈՎ.

## ԾՆԿԻ ՎՐԱ ՅԵԿԱԾ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հրաձգության պայմանները նույնն են, ինչ վոր «կանգնած» հրաձգության համար։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— 180 աչկ։

## ԱՌԱՋԻՆԴԱՍԻ ՀՐԱՁԻԳ ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆՈՎ.

## ՊԱՌԿԱԾ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հրաձգության պայմանները նույնն են, ինչ վոր «կանգնած» հրաձգության համար։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ—190 աչկ։



# ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՆ

## 1

## ԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՆԻՑ ԱՆՑ Է ԿԱՑՎՈՒՄ ԴԱՇՏՈՒՄ— ՀՐԱՁԳԱՐԱՆՈՒՄ

## 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳ

Կատարումը թույլատրվում է 1-ին աստիճանի Վորոշիլովյան հրաձգի նորման կատարածներին։

ԶԵՆՔԸ— 7,62 միլիմետր տրամաչափի հրացան 1891 թվի կամ 1891—1930 թ. թ. տիպարի, առանց կառուցողական փոփոխությունների, նշանոցային հարմարանքները—սահմանված տիպարի. նշանոցը— բաց կամ օրթոպտիկական։

### 1-ին վարժություն

ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ— 300 մետր։

ԹԻՐԱԽԸ— ԲԴԿԲ հրաձգությունների կուրսի № 9 (կրծքաչափ՝ շրջանների վրա)։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար—պառկած, ձեռքից, հրացանային փոկը կիրառելով, մութակի (ստոյկայի) վրայից։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 2 փորձնական և 5 քննական։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար. փորձնական ձիգերի համար— 2 րոպե, մութակիի (ստոյկայի) վրայից կրակի պատրաստվելու համար—10 վայրկյան և քննական ձիգերի համար—30 վայրկյան։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— բաց նշանոց յեղած ժամանակ—35 աչկ, օրթոպտիկական նշանոց յեղած ժամանակ—40 աչկ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ. վարժությունը կատարելուց առաջ հրաձիգը գրավում է իր տեղը կրակի գծի վրա, շարային կեցվածքի «Զգաստ» դրությամբ (կրունկները միասին, հրացանը վոտքի մոտ, փամփուշտները փամփուշտամանում—պայուսակում, փամփուշտամանը կոճկած): «Պառկած լցրու» հրամանով և այդ հրամանից 10 վայրկյան անցնելուց հետո հրաձիգը պետք է կրակի պատրաստվի, հրացանը լցնի, փակաղակը փակի և կոթը կռան տակը վերցնի:

10 վայրկյանում կրակի պատրաստվելը կատարելուց հետո, «Կրակ» հրաման է տրվում. «Կրակ» հրամանից 30 վայրկյան անցնելուց հետո տրվում է «Կաց» հրամանը (սուլիչը):

Սահմանված ժամանակամիջոցում (10 վայրկյանում) կրակի պատրաստվելը չկատարելու դեպքում 2 թույլատրվող փորձերի ժամանակ (վողջ վարժությունը կատարելու համար ամեն անգամ հրաձգարան դուրս գալու ժամանակ) հրաձիգին չի թույլատրվում հրաձգություն կատարելու:

## 2-րդ վարժություն

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ—400 մետր:

ԹԻՐԱԽԸ—№ 3 (ՑԿԳԽ ցուցակի համաձայն):

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար—պառկած, ձեռքից, հրացանի փոկը կիրառելով:



ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 3 փորձնական 5 քննական:

ԺԱՄԱՆԱԿԸ—հրաձգության համար— համապատասխանորեն 3 և 5 րոպե:

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ— բաց նշանոցի ժամանակ—35 աչկ, օրթոպտիկական նշանոցի ժամանակ—40 աչկ:

# ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՆՈՎ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՊԵՏ

Կատարումը թույլատրվում է 2-րդ աստիճանի Վորոշիլովյան հրաձգի նորման կատարածներին:

ԶԵՆՔԸ—7,63 միլիմետր տրամաչափի հրացան, 1891 թ. կամ 1891—1930 թ.թ. տիպարի, առանց կառուցողական փոփոխությունների. Նշանոցային հարմարանքները—սահմանված տիպարի, նշանոցը—բաց կամ օրթոպտիկական:

2912
38

## 1-ին վարժություն.

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ—300 մետր:

ԹԻՐԱԽԸ—ԲԳԿԲ հրաձգությունների կուրսի № 10 (գլխաչափ՝ շրջանների վրա):

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար—պառկած, ձեռքից, հրացանային փոկը կիրառելով, մութակի վրայից:

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 5 (առանց փորձնական փամփուշտների):

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար — 35 վայրկյան։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ. գլխաչափ նշանին դիպումների քանակը բաց նշանացույցով — 4, օրթոօպտիկական նշանացույցով — 5։

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ — վարժությունը կատարելուց առաջ հրաձիգը գրավում է իր տեղը կրակի գծի վրա, այն դրությամբ, որ մատնանշված է 2-րդ աստիճանի Վորոշիլովյան հրաձգի պատրաստության կուրսի 1-ին վարժության մեջ։ «Պառկած, կրակ» հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության համար և սկսում է կրակել։ «Պառկած, կրակ» հրամանից 35 րոպե անցնելուց հետո տրվում է «Կաց» հրամանը (սուլիչ)։

Նորման կատարելու համար քննական ձիգերի կատարումը սահմանված ժամանակամիջոցում պարտադիր է, դիպումների մատնանշված քանակից անկախ։

## 2-րդ վարժություն

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ — 300 մետր։

ԹԻՐԱԽԸ — № 8 (ՑԿԳԽ ցուցակի համաձայն)։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ — հրաձգության համար — կանգնած, ծնկից և պառկած, ընդորում շամպինյոնով օգտվելը չի թույլատրվում. ծնկից հրաձգության ժամանակ բարձի կիրառումը չի թույլատրվում. կանգնած հրաձգության ժամանակ փոկը թույլ է տրվում։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ — 3 փորձնական ցան-



կացած դրությունից և 5-ական քննական յուրաքանչյուր դրությունից։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար — փորձնական ձիգերի համար 3 րոպե և քննական ձիգերի համար — 10 րոպե յուրաքանչյուր դրությունից։ Յուրաքանչյուր դրությունից 5 փամփուշտ արձակում են առանց տեղից շարժվելու։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ — բաց նշանոցով — 120 աչկո, այն պայմանով, որ կանգնած դրությունից առնվազն 34 աչկո տրվի. օրթոօպտիկական նշանոցով 125 աչկո, այն պայմանով, որ կանգնած դրությունից առնվազն 48 աչկո տրվի։

## 2

## ԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՆԻՑ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԴԱՇՏՈՒՄ, ՀԱՏՈՒԿ ԿԱՀԱՎՈՐՎԱԾ ՄՆԱ ՑՊԵՐԱԿԱՆ ՊՈԼԻԳՈՆՈՒՄ (ՀՐԱՁԳԱՐԱՆՈՒՄ)

### ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ՄՆԱՑՊԵՐ

Կատարումը թույլատրվում է 2-րդ աստիճանի Վորոշիլովյան հրաձգի կամ մարտական հրացանով հրաձգության վարպետի նորման կատարածներին։ Վերջիններին այդ թույլատրվում է, յեթե հրաձգությունն ապահովված չէ օպտիկական նշանոց ունեցող զենքով։

ԶԵՆՔԸ — 7,62 միլիմետր տրամաչափի հրացան

1891—1930 թ. թ. տիպարի, առանց կառուցողական փոփոխությունների, բաց նշանոցով։

ՔՈՂԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ։ Քողարկում կատարելու համար թույլատրվում է կիրառել ամրաշինական գործիքներն ու քողարկային հետևյալ միջոցները. քողարկախալաթը (կոմբինեզոն կամ կուրտկան ու շալվարն առանձին-առանձին), գուլպաները (չուլկիները՝ կոշիկների վրա, պատյանը հրացանի վրա (պաշտպանական բինտ), քողարկ-կորզակ, Դելի ցանցը, ուղղաձիգ քողարկ (ամառային և ձմեռային)։

## 1-ին վարժություն

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ— 400 մետր։

ԹԻՐԱԽԸ— ԲԳԿԲ հրաձգությունների կուրսի № 24 (դիտողի մեկ կերպարան, բինոկլով), կորած, վորը հերթում է 6 անգամ յերեք զանազան կետերում, 50 մետր տեղամասի վրա։

Նշանի յերևան գալը տեղի յե ունենում համաչափորեն 10 վայրկյանի ընթացքում։ Յերևան գալուց հետո, նշանը 5 վայրկյան անշարժ է մնում և հետո թաքնվում է, համաչափորեն իջնելով 10 վայրկյանի ընթացքում։ Նշանների յերևան գալու տեղերը և նրանց յերևան գալու հաջորդականությունը հրաձգին հայտնի չեն։ Նշանների յերևան գալու ընդմիջումները տարբեր տևողության են լինում, 10—30 վայրկյանի սահմաններում։



ԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար— պառկած, վայրին համարվելով և քողարկվելով։ Հրացանային փոկի և հենարանի կիրառումը թույլատրվում է։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 5 (փամփուշտամանում)։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար— 5 րոպե,

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— 4 դիպում։

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ— հրաձիգը տեղավորվում է հրաձգային բնագծի վրա, բաց վայրում և քողարկվում է այն հաշվով, վոր նրան կարելի չլինի հայտնաբերել հասարակ աչքով վորոշ հեռավորությունից.

ա) Վարած դաշտում 300 մետրից։

բ) Հնձած մարգագետնի վրա կամ հնձված դաշտում 200 մետրից.

գ) Բարձր խոտով ծածկված վայրում կամ չհնձված արտում 100 մետրից։

դ) Թփուտում 50 մետրից։

Քողարկումը վերջացնելուց հետո, վորի համար 5 րոպե յե տրվում, քողարկման ստուգում է կատարվում համապատասխան բնագծից, վորից հետո փամփուշտ են տալիս և «Կրակ» ազդանշան են տալիս։ «Կրակ» ազդանշանից 5 րոպե անցնելուց հետո «Ավարտ» ազդանշան է տրվում։

## 2-րդ վարժություն

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԻՐԱԽՆԵՐԸ 250 մետրի վրա— նշան № 11 (գլխաչափ), յերևացող։ 300 մետրի վրա—նշան № 30 յետաչափ (շուն) շարժվող։

375 մետրի վրա— նշան № 12 (կրծքաչափ), յերևացող։ 550 մետրի վրա—նշան № 19 (ձեռքի գնդացիր), յերևացող։

Բոլոր նշանները կորած են. յերևացող նշանների (№ 11, 12 և 19) յերևան գալն ու թաքնվելը տեղի յեն ունենում նույնպիսի արագությամբ, ինչպես առաջին վարժության ժամանակ։ Ամբողջովին տեսանելի վիճակում յերևացող 11 և 12 նշաններն անշարժ են մնում 4 վայրկյանի ընթացքում, իսկ № 19 նշանը մնում է 60 վայրկյան։

№ 30 նշանը շարժվում է շեղակի ուղղությամբ, ճակատի նկատմամբ 20 աստիճան անկյան տակ՝ 2 անգամ դեպի կրակողը (աջից ու ձախից) և մեկ անգամ կրակողից դեպի հակառակ կողմը, ամեն անգամ 30 մետր հեռավորությամբ, 14 վայրկյանի ընթացքում, այսինքն մեկ վայրկյանում յերկու մետր արագությամբ։

Բոլոր նշանները յերևան են գալիս ու շարժում են 50 մետր ճակատով տեղամասի վրա, ամեն անգամ նոր տեղում։ Շարժական նշանը յերևան է գալիս և թաքնվում է այնպիսի քողարկների յետևում, վորոնց գնդակը չի ծակում։

ԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար— ինչպես առաջին վարժության ժամանակ։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 15 (փամփշտամանում)։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար—14 րոպե։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— 10 դիպում, բոլոր չորս տեսակի նշանները հարվածելու պայմանով։



ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ— վարժությունն սկսելուց առաջ հրաձիգը գտնվում է յելակետային դրությամբ, ծածկված տեղում, հրաձգային բնագծից 20 մետրի վրա։

Բնագիծը կահավորված չէ։ Բոլոր նշանները թաքնված են։ Առաջադրություն ստանալուց հետո, հրաձիգը քողարկվում է, առաջ է շարժվում ու դուրս գալիս հրաձգային բնագիծը, քողարկվում է այդ բնագծի վրա և պատրաստվում է հրաձգության համար։ Հրաձգային բնագիծը դուրս գալու մասին առաջադրություն ստանալուց 10 րոպե անցնելուց հետո «Կրակ» ազդանշան է տրվում, վորի համաձայն թիրախներն սկսվում են յերևալ գծագրի (գրաֆիկի) համեմատ։ «Կրակ» ազդանշան տալուց 14 րոպե անցնելուց հետո, «Ավարտ» ազդանշան է տրվում։

Հրաձգի գործողության թաքունության և ամբողջ վարժության ընթացքում նրա քողարկման գնահատումը (յելակետային դրությունից առաջ շարժվելու մոմենտից և մինչև «Ավարտ» ազդանշանը) կատարվում է բլինդաժից պերիսկոպով (շրջադիտակով) դիտելու միջոցով վորոշ հեռավորությունից, նայած վայրի բնույթին (տես առաջին վարժության «կատարման կարգը»)։

Յեթե յելակետային դրությունից թաքուն առաջշարժումը և հրաձգային բնագծի վրա քողարկումը չի կատարվում հրաձգի կողմից մինչև «Կրակ» ազդանշանը, յերկու անգամ թույլ տրված փորձեր կատարելուց հետո (ամբողջ վարժության կատարման համար ամեն անգամ հրաձգարան դուրս գալու ժամանակ), հրաձիգին չի թույլատրվում վարժության (հրաձգության) հե-

տեւյալ մասը կատարելու։ Եթե հրաձիգը հայտաբերվում է վարժության (հրաձգության) 2-րդ մասի կատարման ժամանակ, վարժությունն անցկացնելը դադարեցվում է։

Եթե հրաձիգը պատրաստվի հրաձգության համար հրաձգային բնագծի վրա՝ «Կրակ» ազդանշան տալու համար սահմանված ժամանակից (10 րոպե) ավելի շուտ, ապա այսպիսի դեպքում «Կրակ» ազդանշանը թույլատրվում է տալ հրաձգի կողմից «Պատրաստ եմ» հայտարարելուց հետո։

Վարժության (հրաձգության) 2-րդ մասը կատարելու ժամանակ, յեթե № 30 (շուն) նշանից վոչ մեկը չի հարվածվի, դրանից հետո վարժությունն անցկացնելը դադարեցվում է № 30 նշանը 3-րդ անգամ յերեվալուց հետո, այսինքն 7-րդ րոպեյի ժամանակ։

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՍՆԱՅՊԵՐ

Կատարումը թույլատրվում է 2-րդ դասի սնայպերի կամ մարտական հրացանի վարպետի նորմաները կատարածներին։

ԶԵՆՔԸ — 7,62 միլիմետր տրամաչափի հրացանը 1891—1930 թ.թ. տիպարի, առանց կառուցողական փոփոխությունների, օպտիկական նշանոցով։

ՔՈՂԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ—ինչպես 2-րդ դասի սնայպերի համար 2-րդ և 3-րդ վարժությունները անցկացնելու ժամանակ։



### 1-ին վարժություն

Թույլատրվում է անցկացնել հրաձգարանում.

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ — 600 մետր։

ԹԻՐԱԽԸ—№ 2 (ՖԿԳԽ ցուցակի համաձայն)։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար—պառկած, ձեռքից, հրացանային փոկը կիրառելով։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ—3 փորձնական և 10 գնական։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար— համապատասխանաբար 5 և 10 րոպե։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ—43 աչկ։

### 2-րդ վարժություն

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ—800 մետր։

ԹԻՐԱԽԸ—ԲԳԿԲ հրաձգությունների կուրսի № 16 —հասակաչափ կերպարան, վորը յերևան է գալիս, 100 մետր ճակատով տեղամասի վրա, յերեք տարբեր տեղերում, ընդամենը 7 անգամ։ Երեք նշաններից յուրաքանչյուրը յերևան է գալիս, դուրս գալով քողարկի յետևից (տուն, խոտի դեզ, թփուտ և այլն), և շարունակում է շարժումը ճակատի յերկայնությամբ մինչև մյուս քողարկը, վորի մոտ կանգ է առնում 5 վայրկյան, վորից հետո թաքնվում է այդ քողարկի յետևում։ Քողարկները գնդակը չի ծակում։

Յուրաքանչյուր նշանի շարժումը տեղի յե ունենում 15 մետր տեղամասի վրա, 10 վայրկյանի ընթացքում, այսինքն մեկ վայրկյանում մեկ ու կես

մետր արագությամբ։ Նշանների յերևան գալու ընդմիջումները — 20—40 վայրկյանների սահմաններում։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար—պառկած, վայրին հարմարվելով և քողարկվելով։ Փոկի ու հենարանի կիրառումը թույլ է տրվում։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 5 (փամփշտամանում)։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար—5 րոպե։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— 3 դիպում։

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ—ինչպես 2-րդ դասի սնայպերի համար 1-ին վարժության ժամանակ։

## 3-րդ վարժություն

### ՀԵՌԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹԻՐԱԽՆԵՐԸ

300 մետրի վրա— Նշան № 11 (գլխաչափ) յերևացող։

350 մետրի վրա— Նշան № 30 յեռաչափ (շուն), շարժվող։

450 մետրի վրա— Նշան № 12 (կրծքաչափ), յերևացող։

600 մետրի վրա — Նշան № 18 (ձեռքի գնդացիր, շարժման ժամանակ), շարժվող։

650 մետրի վրա— Նշան № 19 (ձեռքի գնդացիր), յերևացող։

Մնացածը— ինչպես 2-րդ դասի սնայպերի համար 2-րդ վարժության ժամանակ, բացի հետևյալ



քաներից։ Բոլոր նշանները տեղավորվում են 100 մետր ճակատով տեղամասի վրա։ № 18 նշանի շարժումը տեղի յե ունենում շեղակի ուղղությամբ, ճակատի նկատմամբ 30 աստիճանի անկյան տակ, յերկու անգամ դեպի կրակողը (ձախից և աջից) և մեկ անգամ կրակողից դեպի դաշտը. ամեն անգամ նշանը շարժվում է 30 մետր տեղամասի վրա և 14 վայրկյանի ընթացքում, այսինքն մեկ վայրկյանում 2 մետր արագությամբ։ Նշանը շարժվում է, պահպանելով իր ցելակետային դրությունը— ճակատի գծի զուգահեռ։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար— ինչպես 2-րդ վարժության ժամանակ։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 20 (փամփշտամանում)։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար— 18 րոպե։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— 12 դիպում, բոլոր 5 տեսակի նշանները հարվածելու պայմանով։

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ— ինչպես 2-րդ դասի սնայպերի համար 2-րդ վարժության ժամանակ, հետևյալ փոփոխություններով.

ա) Ցելակետային դրությունը գտնվում է հրաձգային բնագծից 30 մետրի վրա։

բ) Ժամանակը՝ հրաձգային բնագիծը դուրս գալու մասին առաջադրություն ստանալու մոմենտից և մինչև «Կրակ» ազդանշանը— 15 րոպե։

գ) Յեթե № 30 (շուն), նույնպես և № 18 նշաններից վոչ մեկը չի հարվածվել (յեթե հարվածվել է թեկուզ մեկ № 30 նշանը) վարժության հետագա շա-

բունտկումը դադարեցվում է համապատասխանաբար 8-րդ կամ 15-րդ րոպեյի ժամանակ։

Մնացած բոլորը առանց փոփոխության։

## ԱՏՐՃԱՆԱԿ (ՊԻՍՏՈԼԵՏ)

### 1

### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՊԻՍՏՈԼԵՏԻՑ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԻՊԱՐԻ ԱՏՐՃԱՆԱԿԻ (ԱՎՏՈՊԻՍՏՈԼԵՏԻՑ) ԱՆՑ Է ԿԱՑՎՈՒՄ ՏԻՐՈՒՄ

*ՀՐԱՁԻԳ (սկզբնական դասակարգում)։*

*ԶԵՆՔԸ — Փոքրակալիբր ատրճանակ (պիստոլետ, ավտոպիստոլետ), կամ 1895 թ. տիպարի «Նագան» ատրճանակ, կամ 1930 թ. ավտոպիստոլետ, և նշանոցային հարմարանքներ—սահմանված տիպարի, բաց։*

*ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ — 25 մետր։*

*ԹԻՐԱԽԸ — № 5 (ՅԿԳԽ ցուցակի համաձայն)։*

*ԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար — կանգնած, ազատ ձեռքից։*

*ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ — 5։*

*ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար — 5 րոպե։*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ — փոքրակալիբր զենքի համար — 40 աչկո, ռազմական տիպարի զենքի համար — 35 աչկո։*



### 2

### ԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԻՊԱՐԻ ԱՏՐՃԱՆԱԿԻՑ (ԱՎՏՈՊԻՍՏՈԼԵՏԻՑ) ԱՆՑ Է ԿԱՑՎՈՒՄ ԴԱՇՏՈՒՄ ՀՐԱՁԳԱՐԱՆՈՒՄ

### ԱՏՐՃԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՎԱՐՊԵՏ ԿԱՄ ՀՐԱՁԻԳ

*Կատարումը թույլատրվում է ատրճանակով (պիստոլետով) սկզբնական դասակարգման նորման կատարածներին։*

*ԶԵՆՔԸ — 1895 թ. տիպարի «Նագան» ատրճանակ կամ 1930 թվի տիպարի ավտոպիստոլետ։*

*ՆՇԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԸ — սահմանված տիպարի, բաց։*

*ԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար — կանգնած ազատ ձեռքից։*

#### 1-ին վարժություն

*ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ — 50 մետր։*

*ԹԻՐԱԽԸ — № 5։*

*ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար — համապատասխանաբար 3 և 5 րոպե։*

#### 2-րդ վարժություն

*ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ — 30 մետր։*

*ԹԻՐԱԽԸ — № 5։*

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 5 (առանց փորձնական փամփուշտների)։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար—21 վայրկյան։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— յերկու վարժությունների արդյունքների գումարի համեմատ՝ վարպետի համար— 70 աչկո, 1-ին դասի հրաձգի համար— 60 աչկո։

## ՊԱՏԱՆԻ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳ

### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆԻՑ ԱՆՑ Ե ԿԱՑՎՈՒՄ ՏԻՐՈՒՄ

Կատարումը թույլատրվում է այն պիոներներին, վորոնք կատարել են սկզբնական դասակարգման նորման փոքրակալիբր հրացանով (տես «Սկզբնական դասակարգումը հրացանի համար»)։

ԶԵՆՔԸ—ՏՈԶ փոքրակալիբր հրացան, մոդել 8 կամ 9-ը, առանց կառուցողական փոփոխությունների։

ՆՇԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԸ— սահմանված տիպարի, նշանոցը բաց։

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ— 25 մետր։

ԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ հրաձգության համար—պառկած, ձեռքից, հրացանային փոկը կիրառելով։



### 1-ին վարժություն

ԹԻՐԱԽԸ — № 6 (ՑԿԴԽ ցուցակի համաձայն)։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 3 փորձնական և 5 քննական։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար— համապատասխանաբար 3 և 5 րոպե։

### 2-րդ վարժություն

ԹԻՐԱԽԸ— ԲԳԿԲ հրաձգությունների կուրսի № 12, փոքրացրած 12 անգամ.

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ— 3 (առանց փորձնական փամփուշտների)։

ԺԱՄԱՆԱԿԸ հրաձգության համար— մեկ րոպե, չհաշվելով առաջին անգամ լցնելը։

ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՆ— 1-ին վարժության համար— 42 աչկո, 2-րդ վարժության համար — 3 դիպում։

---

023

ՀՀ Ազգային գրադարան
NL0278928

652 13 207

ԳԻՆԸ 60 ԿՈՊԵԿ